


Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի 05.02.2014թ. 3/7-Լ
 որոշմամբ

Խորհրդի նախագահ՝
Արա Ջոհրաբյան



«ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ»
Կ Ա Ր Գ

ք. Երևան
2014թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգը սահմանում է փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների (**այսուհետ՝ Կազմակերպություններ**) հավատարմագրման դիմումների ներկայացման և քննարկման կարգը, ինչպես նաև հավատարմագրման չափորոշիչները և հավատարմագրի տրամադրման ժամկետը և կարգը:

1.2 Հավատարմագիր կարող է տրամադրվել առևտրային կամ ոչ առևտրային իրավաբանական անձանց՝ սույն կարգով սահմանված պահանջների բավարարման դեպքում:

1.3 Սույն կարգով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**) համարվում է հավատարմագրված և իրավասու է վերապատրաստման դասընթացներ կազմակերպել փաստաբանների համար:

2. Կազմակերպությունների հավատարմագրման չափորոշիչները

2.1 Կազմակերպությունը կարող է հավատարմագրվել միայն այն դեպքում, եթե՝

- ունի վերապատրաստման ծրագրեր իրականացնելու առնվազն հինգ տարվա փորձ (խորհուրդը կարող է այս ժամկետը հաշվի չառնել, եթե կազմակերպությունն ունի բարձր հեղինակություն կամ կազմակերպությունը հանդիսանում է բարձրագույն ուսումնական հաստատություն),

- ներկայացրել է սույն կարգի մյուս պահանջներին բավարարող անհրաժեշտ ապացույցներ (այդ թվում՝ սույն կարգի 3.5 կետի պահանջի հավաստման վերաբերյալ)։

- Պալատ է ներկայացրել հավաստագիր, որ իր նկատմամբ կիրառելի է համարում նաև սույն կարգի պայմանները:

(կետը փոփոխվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 16.10.2014թ. թիվ 28/11-Լ որոշմամբ](#))

2.2 Հավաստագրի ձևը և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են Պալատի նախագահի կողմից:

2.3 Կազմակերպություններին հավատարմագիր տրամադրվում է մեկ տարի ժամկետով: Հավատարմագրի ձևը սահմանում է Պալատի նախագահը:

2.4 Հավատարմագրման դիմումները Պալատին են ներկայացվում Պալատի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետում և քննարկվում են դիմումը ներկայացնելու պահից մեկ ամսվա ընթացքում:

2.5 Կազմակերպությանը հավատարմագրելու կամ դիմումը մերժելու մասին որոշումը կայացնում է Պալատի խորհուրդը: Պալատի խորհուրդը կարող է Կազմակերպությանը հավատարմագրելու մասին դիմումը մերժել, եթե պահպանված չեն սույն կարգի 2.1 կետում նշված պահանջները, ինչպես նաև այն դեպքում, եթե Կազմակերպության գործունեությունը կամ հեղինակությունը չեն համապատասխանում Պալատի կանոնադրության, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի այլ ներքին իրավական ակտերի պահանջներին:

(կետը փոփոխվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 16.10.2014թ. թիվ 28/11-Լ որոշմամբ](#))

2.6 Այն կազմակերպությունները, որոնք Պալատի հետ ունեն արդյունավետ համագործակցության փորձ փաստաբանների վերապատրաստման և փաստաբանության կայացման հարցերում, կարող են հավատարմագրվել ՀՀ

փաստաբանների պալատի նախագահի նախաձեռնությամբ՝ պարզեցված կարգով: Սույն կետում նշված դեպքում, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը որոշում է կայացնում կազմակերպությանը հավատարմագրելու մասին, պայմանով, որ վերապատրաստման դասընթացները և դասընթացավարները նախապես պետք է համաձայնեցվեն ՀՀ փաստաբանների պալատի հետ:

(կետը փոփոխվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 14.03.2014թ. թիվ 7/7-Լ որոշմամբ](#))

3. Կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները

3.1 Կազմակերպություններն իրավունք ունեն սահմանել փաստաբանների վերապատրաստման իրենց գնացուցակը:

3.2 Կազմակերպությունները պարտավոր են փաստաբանների վերապատրաստումն իրականացնել Պալատի նախագահի որոշմամբ հաստատված թեմաների շրջանակում:

3.3 Կազմակերպությունները պարտավոր են փաստաբանների վերապատրաստումն իրականացնող դասավանդողներին ընտրել Պալատի նախագահի որոշմամբ սահմանված չափանիշներով:

3.4 Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա տասը Պալատին ներկայացնել վերապատրաստված փաստաբանների վերաբերյալ տեղեկանք՝ առանձին նշելով վերապատրաստման թեմաները, դասավանդողներին և ժամաքանակը: Տեղեկանքի ձևը սահմանում է Պալատի նախագահը:

3.5 Վերապատրաստող կազմակերպությունները պետք է հազեցած լինեն վերապատրաստումն իրականացնելու համար անհրաժեշտ տարածքով և տեխնիկայով, կամ ունենան այդպիսի պայմանները բավարարող կազմակերպության հետ կնքված համապատասխան պայմանագիր:

4. Կազմակերպությունների պատասխանատվությունը սույն կարգի պահանջները խախտելու դեպքում

4.1 Դասավանդողների ընտրությունը սույն կարգով սահմանված պահանջների խախտմամբ կատարելու կամ վերապատրաստման թեմաները Պալատի նախագահի սահմանած ցանկից չընտրելու դեպքում Պալատի խորհուրդը կարող է վաղաժամկետ դադարեցնել Կազմակերպության հավատարմագրի գործողությունը:

4.2 Սույն կարգի 4.1 կետով սահմանված դեպքում Պալատը փաստաբանի վերապատրաստման ժամերը չի ներառում փաստաբանների համար սահմանված պարտադիր վերապատրաստման ժամերի մեջ:

4.3 Հավատարմագրի գործողությունը դադարում է նաև ժամկետը լրանալու հիմքով:

4.4 Սույն կարգի 4.1 կետով սահմանված հիմքով հավատարմագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում Կազմակերպությունը կարող է դիմել կրկին հավատարմագիր ստանալու համար միայն հավատարմագրի դադարեցման օրվանից մեկ տարի անց:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի փետրվարի 7-ից:

5.2 Սույն կարգում լրացումներ կամ փոփոխություններ կարող է կատարվել Պալատի խորհրդի որոշմամբ:

* * *